ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ VIII, № 11, 1955 Биол. и сельхоз. науки

Ի. Մ. ՍԵՉԵՆՈՎԻ ՄԱՀՎԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ա. Ա. Լալայան

Ի. Մ. ՍԵՉԵՆՈՎԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՆԱԽԱՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Ռուս մեծ գիտնական Ի. Մ. Սեչենովի հայացքների արձագանքները հայ պարբերական մամուլում, ըստ մեր ձեռքի տակ եղած նյութերի, վերաբերում են դեռևս 1869 թվականին, կապված կանանց բարձրագույն բժշկական կրթության հարցի հետ։ Հանրահայտ է, որ Ի. Մ. Սեչենովը եղել է կանանց իրավունքների համար մարտնչող։

Ինչպես ինքը՝ Ի. Մ. Սեչենովն է նշում իր «Ինքնակենսագրական նոթերում», դեռևս արտասահմանում եղած ժամանակ, լսելով Ռուսաստանում կանանց բարձրագույն կրթության ձգտման մասին, նա համակրությամբ է վերաբերվել այդ հարցին։

Երբ Սեչենովը վերադառնում է Ռուսաստան, դեռևս 1861 թվականին երկու ռուս կանայք սկսում են հաճախել Պետերբուրգի Բժշկա-վիրաբուժական ակադեմիա, ունկնդրում մի շարք պրոֆեսորների, այդ թվում Ի. Մ. Սեչենովին։ Տեսնելով այդ կանանց ազնիվ ձգտումները, Ի. Մ. Սեչենովը նրանց քաջալերելու նպատակով գիտական աշխատանքի թեմաներ է տալիս, որոնք նրանք հաջողությամբ կատարում են և հրատարակում ռուսերեն, ապա նաև գերմաներեն։

Իր ժամանակին ինչպես Ռուսաստանում, այնպես էլ արտասահմանում շատ շատերի համար կանանց շարժումը և այդ ուղղությամբ Ի. Մ. Սեչենովի համակրանքն անհասկանալի էին։

Ի. Մ. Սեչենովը գրում է, որ իր հետ ունեցած զրույցի ժամանակ, գերմանական ֆիզիոլոգ Դյու-Բուա-Ռեյմոնը ասել է, որ նա «չէր հասկանում այդպիսի շարժման պատճառները, այնքանով, որքանով նրան երբեք չէր հանդիպել իրեն ծանոթ ընտանիքներում, որ կանայք գժգոհ լինեն իրենց վիճակից և ձգտեն ինքնուրույն լինել։ Շատ ավելի քիչ այդ հասկանալի էր,— գրում է Ի. Մ. Սեչենովը,—անցյալից ինձ ծանոթ երիտասարդ գերմանացիներին» [1]։

1863 թվականին Ի. Մ. Սեչենովը զեկուցագրով դիմում է ռազմական մինիստրի գլխավոր դիրեկտորին, որպեսզի այդ երկու ռուս կանանց թույլատրվի սովորելու Բժշկա-վիրաբուժական ակադեմիայում։ Այդ կանայք, որպեսզի իրավունք ստանային բժշկական կրթություն ձեռք բերելու, ցանկություն էին հայտնում ավարտելուց հետո մեկնել Օրենբուրգի երկրամասը, տափաստաններում բնակվող բնակչության մեջ աշխատելու։ Հարցի բացասական լուծման հետևանքով Ն. Պ. Սուսլովան մեկնեց Շվեյցարիա և 1864 թվականին մեկ այլ ռուս օրիորդի հետ ընդունվեց Ցյուրի-

խի համալսարանի բժշկական ֆակուլտետը, նպատակ ունենալով ծառայել ժողովրդի առողջապահության բարօրության գործին։

Ուստ կինը խիզախում էր ջախջախել հասարակական կարծիքի նախապաշարումները։ Այն փաստը, որ կինը ուզ էր դնում եվրոպական համալսարանը, իր ժամանակին հսկայական աղմուկ հանեց Եվրոպայում, նրա արձագանքները հասան մինչև Հայաստան։

Հայտնի է, որ բուրժուական լիբերալ մամուլը ևս իր ժամանակին արծարծել է կանանց հարցը, թեպետ նա գրանով դեմ էր դնում ֆեոդալական հասարակակարգի բարքերին, սակայն խոսքը իսկական ազատության մասին չէր։ Նախասովետական հայ մամուլում ևս այդ բնույթի հոդվածներ քիչ չեն եղել։

Վերոհիշյալ դեպքի առթիվ 1868 թվականին Գ. Արծրունին Հայդլբերգից մի հոդված է գրում «Ցյուրիխի համալսարանը» վերնագրով, որը տպագրվել է «Հայկական աշխարհում» 1869 թվականին։

Իր այդ հոդվածում Գ. Արծրունին նկարագրում է, թե ինչպես արևմտաեվրոպացիները վերոհիշյալ երևույթը գնահատել են իբրև «զարմանալի և հրաշալի իրողություն», «ստատիկ խորթ թվացող երևույթ», որ «կնոջ ընավորության և բարոյականության ամենևին հարմար պարապմունք չէ»։

Գ. Արծրունին մատնանշում է այն դժվարությունները, որ հաղթահարել են այդ երկու օրիորդները.—

«Առաջին ժամանակ, երբ աղջիկը համալսարանի նախասենյակով էր անցնում դասախոսություն լսելու նպատակով, ուսանողների խմբերում ծիծաղ և դանդաղ կծու խոսքեր էին լսվում»։ Չնայած այդ ամենին, նրանք «ավելի եռանդով էին աշխատում, քան թե ուսանողներից շատերը, առավել զարգացած էին, քան որևիցե ուսանող»։

Գ. Արծրունու այդ հոդվածը գրված է ջերմ համակրության զգացումով դեպի ռուս կինը, որը խիզախում էր ուզ դնել գիտության ասպարեզը։

Ինչպես պարզվում է հետագայում Գ. Արծրունու գրած հոդվածներից, նա անձամբ ճանաչել է այդ երկու ռուս կանանց։

Վերոհիշյալ հոդվածում Գ. Արծրունին մեջբերում է Ի. Մ. Սեչենովի խոսքերը Սուսլովայի մասին։ Ահա թե ինչ է ասված Գ. Արծրունու հոդվածում.

«Տանի մի ժամանակից հետո «Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրի մեջ, պրոֆեսոր Սեչենովից ստորագրված մի տեղեկություն էինք կարդում։ Չեմ հիշում ճշտապես նրա խոսքերը, բայց միտքը սա էր.

«Մենք անձամբ ծանոթ էինք աղնիվ և աշխատասեր օրիորդի հետ, երբ նա Պետերբուրգում դիմեցավոնի քննության էր պատրաստվում։ Օրիորդ Սուսլովան բռնեց այժմ բժշկության գոկտորի հարցաքննությունը.— հասարակությունից կախված կլինի ընդունել նորան և բացահայտել նորա ուսումնական գործունեության լայն ասպարեզ։ Հասարակության ընդունելությունից կամ չընդունելությունից կախված կլինի և այն, թե կգտնվեն արդյոք մեր օրիորդների մեջ այս եռանդոտ օրիորդների օրինակին հետևողներ թե ոչ» [2]։

Ավելորդ չէ նշել, որ Ն. Պ. Սուսլովան իր գոկտորական դիսերտացիան գրել է Ի. Մ. Սեչենովի ղեկավարությամբ։ Այդ աշխատանքի մասին Ի. Մ. Սեչենովը ասել է, որ Սուսլովան «ստացել է շատ լավ արդյունքներ»։

Ի. Մ. Սեչենովի աշակերտուհի Ն. Պ. Սուսլովան առաջին ռուս կինն էր, որ տակավին 1867 թվականին բժշկության դոկտորի աստիճան ստացավ։ Շուտով նրան հետևեցին նաև ուրիշները։ 1871 թվականին դոկտորական դիսերտացիա պաշտպանեց Ի. Մ. Սեչենովի կինը՝ Մ. Ա. Բոկովա-Սեչենովան, որը, ինչպես վերը ասվեց, Ն. Պ. Սուսլովայի հետ միաժամանակ դեռևս 1861 թվականին, Ի. Մ. Սեչենովի ղեկավարությամբ Պետերբուրգի Բժշկա-վիրաբուժական ակադեմիայում կատարեց իր առաջին գիտական ուսումնասիրությունը։

Ի. Մ. Սեչենովի ծավալած գիտա-մանկավարժական գործունեության արձագանքները լսելի են դառնում նաև նախասովետական հայ պարբերական մամուլում։

Այսպես, օրինակ, 1889 թվականին «Մշակում», Մոսկվայից ուղարկված մի նամակում նկարագրվում է «հռչակավոր պրոֆեսոր Սեչենովի» դասախոսությունը Մոսկվայի համալսարանում։

«Առաջին լեկցիային ժողվել է 300-ից ավելի լսողներ, էլի գրվում էին լսելու,— պատմում է նամակի հեղինակը։ Լսողների թվում կան համալսարանի բժշկական և բնագիտական բաժանմունքների հայտնի պրոֆեսորներ, ծերունի փորձված բժիշկներ, հայտնի պրակտիկներ, կին բժիշկներ և այլն, և այլն։ Շատ սրատաշարժ էր այն հանգամանքը, որով վերաբերվում էին լսողները գեպի ծերունի և համակրելի գիտնականը. լեկցիաները վերջանում էին լուրջ լսողների ոգևորված բուռն ծափահարություններով [3]։

Ի. Մ. Սեչենովն իր հետևորդներն է ունեցել նաև նախասովետական հայ իրականության մեջ։ Ի. Մ. Սեչենովի հոգեբանական հայացքները, ինչպես մատնանշում է Մ. Մազմանյանը, դեռևս XIX դարում թափանցելով մեր իրականության մեջ, իրենց գրական դերն են խաղացել հայերի մոտ հոգեբանական գիտության զարգացման գործում։ Հայ հոգեբան Ա. Բ. Բահաթրյանը իր «Համառոտ գործնական հոգեբանություն» վերնագիրը կրող աշխատության մեջ, որը լույս է տեսել 1882 թվականին, մի շարք հոգեբանական պրոցեսներ, հատկապես մտապատկերները, մեկնաբանում է Ի. Մ. Սեչենովի ուսմունքի դիրքերից։

Եթե հոգեբան Բահաթրյանը կրել է Ի. Մ. Սեչենովի հոգեբանական հայացքների ազդեցությունը, ապա ֆիզիոլոգներ Ս. Ս. Խատամանովը և Վ. Ի. Վարդանովը ընթացել են Ի. Մ. Սեչենովի ֆիզիոլոգիական ուսմունքի ուղիով։

Ս. Ս. Խատամանովը 1885 թվականին Պետերբուրգի Ռազմա-բժշկական ակադեմիայում դոկտորական դիսերտացիա է պաշտպանել «Մարդու անոթային սիստեմի վրա զգացող ներվերի գրգռման ազդեցության մասին» թեմայով։ Այդ հետազոտությունը կատարված է Ի. Ռ. Թարխանովի ֆիզիոլոգիական լաբորատորիայում։

Ս. Ս. Խատամանովի վերոհիշյալ աշխատանքը մի արժեքավոր ուսումնասիրություն է, որ հետաքրքրություն է ներկայացնում թե ֆիզիոլոգների և թե հոգեբանների համար։ Իր կողմից առաջ քաշված և էքսպերիմենտալ ճանապարհով լուծված մի շարք այլ հարցերի հետ մեկտեղ, Ս. Խատամանովը կանգ է առնում նաև հետևյալ հարցի վրա։ Իր կատարած փորձերից նա գալիս է այն եզրակացությանը, որ զգայարանների գրգռումների

հետևանքով փոփոխություններ են կատարվում պերիֆերիկ արյան շրջանառության մեջ։ Այդ փոփոխություններն առաջացվում են ինչպես ուղղակի, այնպես էլ իլյուզիոնար գրգռման հետևանքով, երբ փորձին սովորած օբյեկտին խաբում են, այսինքն՝ ցույց են տալիս, որ պատրաստվում են հայտնի գրգռիչով նրա վրա հորից ներգործելու, բայց իրականում չեն ներգործում։ Այդ փաստերից հեղինակը այն հետևությունն է անում, որ այս պրոցեսում, բացի անոթաշարժ պարզ ռեֆլեքսից, մասնակցում են նաև բարձրագույն ուղեղային կենտրոնները և այնտեղ ծագող մասպատկերները։ Վերոհիշյալ երևույթը հեղինակը արտասովոր չի համարում, վկայակոչելով առանձին կյանքում հանդիպող նմանօրինակ փաստեր, ինչպիսիք են ամոթից կարմրելը, որը առաջանում է երբեմն նույնիսկ ամոթը պատկերացնելիս, կամ վախից գունատվելը և այլն։

Ս. Իսամանովը վկայակոչում է նաև Ի. Մ. Սեչենովի և Ի. Ռ. Թարխանովի կողմից վերոհիշյալ երևույթի վերաբերյալ կատարված դիտողությունները։ «Երևույթների այդ կատեգորիային,— գրում է Ս. Իսամանովը, վերաբերվում է նաև ցրտի սոսկ մասպատկերման դեպքում սագամաշկի առաջացման ու մաշկի գունատման վերին աստիճանի հետաքրքրական դեպքերը, որոնք դիտել են պրոֆ. Սեչենովը, ինչպես նաև պրոֆ. Թարխանովը» [4]։

Այս հատվածի ծանոթագրության մեջ Իսամանովը նշում է Ի. Ս. Սեչենովի «Գլխուղեղի ռեֆլեքսները» աշխատությունը։

Մասպատկերների վերաբերյալ սեչենովյան ուսմունքը հայրենական ֆիզիոլոգիայի և հոգեբանության խոշորագույն նվաճումներից է։ Առաջնորդվելով սեչենովյան ուսմունքով, Ս. Իսամանովը էքսպերիմենտալ ճանապարհով ցույց էր տալիս այն փոփոխությունները, որոնք առաջանում են համապատասխան մասպատկերների ժամանակ արյան շրջանառության մեջ։ Դրանով Ս. Իսամանովը էքսպերիմենտալ ճանապարհով ապացուցում էր և հաստատում Ի. Մ. Սեչենովի իդեան։

Վ. Ի. Վարդանովը 1892 թվականին Պետերբուրգի Բալմա-բժշկական ակադեմիայում դոկտորական դիսերտացիա է պաշտպանել «Գալվանական երևույթներ գորտի մաշկում» թեմայով։ Այս արժեքավոր հետազոտությունը նույնպես կատարվել է պրոֆ. Ի. Ռ. Թարխանովի լաբորատորիայում։ Իր դիսերտացիայում Վ. Ի. Վարդանովը օգտագործել է Ի. Մ. Սեչենովի իդեան, որը նրան հաղորդել էր բժիշկ Բ. Վերիգոն։ Սովորական երկու վերջավորություն ունեցող էլեկտրոդների փոխարեն Վ. Ի. Վարդանովը կիրառել է Ի. Մ. Սեչենովի կողմից առաջարկված երեք վերջավորություն ունեցող էլեկտրոդ։ Իր աշխատանքում Վ. Ի. Վարդանովը նկարագրում է սեչենովյան իդեան, բացահայտում նրա նշանակությունը։ Հենց այդտեղ էլ Վ. Ի. Վարդանովը գրում է՝ «Այդպիսի էլեկտրոդներ օգտագործվել են պրոֆ. Ի. Մ. Սեչենովի լաբորատորիայում և ինձ հայտնվել է նրա նախկին ասիստենտ, բժիշկ Բ. Վերիգոյի կողմից։ Այս վերջինս լիազորել է ինձ, օգտագործելով և նկարագրելով այդ էլեկտրոդները, նշել, որ դրանք գեռևս չեն նկարագրված և որ դրանց կառուցվածքի իդեան պատկանում է Ի. Մ. Սեչենովին» [5]։

Ի. Մ. Սեչենովի ազդեցությունը ի հայտ է գալիս Վարդանովի դիսերտացիայի ոչ միայն մեթոդիկայում, այլ նաև բուն աշխատանքում։ Ինչպես

նշում է Ա. Ս. Կոշտոյանցը, Վ. Ի. Վարդանովը իր գիսերտացիայում «շեշտում էր համանմանությունը մաշկային էլեկտրական երևույթների և Սեչենովի կողմից ողնուղեղում հայտնաբերված էլեկտրական երևույթների միջև» [6]։

Վ. Ի. Վարդանովը եղել է Ի. Մ. Սեչենովի անվան սուտական ֆիզիոլոգների ընկերության և Ի. Մ. Սեչենովի անվան սուտական ֆիզիոլոգիական մասնագիտական ակտիվ նախաձեռնողներից և հիմնադիրներից մեկը [7]։

Այն փաստը, որ Բոտամանովը և Վարդանովը ընթացել են Սեչենովի ուսմունքի ուղիով, պատահական չէ։ Թե Բոտամանովը և թե Վարդանովը, ինչպես վերը ասվեց, եղել են Թարխանովի աշակերտները։ Թարխանովը իր հերթին եղել է Սեչենովի աշակերտը և նրա հաջորդը Ռազմա-բժշկական ակադեմիայի ֆիզիոլոգիայի ամբիոնում։ Իր մի շարք հետազոտություններով Թարխանովը զարգացրել է Սեչենովի ուսմունքը, պրոպագանդել նրա գաղափարները։

Այսպիսով, աշխատելով այն լաբորատորիայում, որը նախկինում զբաղվել էր Սեչենովը, վերջինիս աշակերտ և հետևորդ Թարխանովի ղեկավարությամբ, Բոտամանովը և Վարդանովը իրենց դոկտորական դիսերտացիաները գրելիս կրել են Սեչենովի գաղափարների ազդեցությունը։

Ի. Մ. Սեչենովը եղել է Կովկասյան բժշկական ընկերության առաջին պատվավոր անդամներից մեկը։

Արտահայտելով կովկասյան առաջավոր բժիշկների լավագույն զգացմունքները, Կովկասյան բժշկական ընկերության այդ ժամանակվա նախագահ Ա. Ֆիշերը, նույն ընկերության 1906 թ. փետրվարի 3-ի նիստում հանդես եկավ Ի. Մ. Սեչենովի հիշատակին նվիրված ճառով։ Ցավոք այդ ճառում Ա. Ֆիշերը նշում էր, որ Ռազմա-բժշկական ակադեմիայում Ի. Մ. Սեչենովի հետ համարյա միաժամանակ ամբիոն ստացավ նաև գեներալ Մոսկվայի համալսարանից նրա ընկեր Ս. Պ. Բոտկինը։ «Այս երկու երիտասարդ գիտնականները,— ասում էր Ա. Ֆիշերը Ի. Մ. Սեչենովի և Ս. Պ. Բոտկինի մասին,— պրոֆեսորներ Գրաուերի, Զինինի, և ուրիշների հետ միասին, հանդիսացան նոր դպրոցի լավագույն ներկայացուցիչները, որը ձգտում էր այլ ոգի, այլ ուղղություն մտցնել չինովնիկական-սխոլաստիկական հնաոճությունի մեջ...»։

«Եթե հիշենք, որ դա 60-ական թվականների սկիզբն էր,— շարունակում է Ֆիշերը,— ապա մեզ համար պարզ կլինի այն հասարակական մթնոլորտը, որտեղ վիճակված էր աշխատել Սեչենովին և նրա կոմեակիցներին։ Սեչենովի ծառայությունները գիտության ոլորտում մեզ բոլորիս բավականաչափ հայտնի են, նրա աշխատանքները կենտրոնական ներվային սիստեմի ասպարեզում... բոլորովին հեղաշրջեցին տիրող հայացքները բիոլոգիայի կարևորագույն փիլիսոփայական պրոբլեմների վերաբերյալ։ Ընդ որում Սեչենովի խոշոր պոպուլյարիզատորական ասպարեզը օժանդակեց ինտելիգենցիայի լայն շրջաններում տարածելու բնապատմական գիտելիքներ, որոնք այդ ժամանակ բնկած էին առաջավոր մտածողների սոցիոլոգիական մտահայեցողության հիմքում։ Նրա «Գլխուղեղի ռեֆլեքսները» նշանավոր աշխատությունն այդ ժամանակ հանդիսանում էր ամեն մի կրթված մարդու սեղանի գիրքը։ Դրա համար էլ զարմանալի չէ, որ Սեչենովը գիտության ասպարեզում իր բազմաթիվ ընկերների հետ միա-

սին վարչության աչքում ձեռք բերեց... և «մատերիալիստի»... համբավը» [8]։

Կովկասյան բժշկական ընկերության նախագահն իր ելույթն ավարտում է շեշտելով, որ Սեչենովը մինչև իր կյանքի վերջը առանց տատանվելու հավատարիմ մնաց մարդկության լավագույն իդեալներին։

Ինչպես վերը նշեցինք, սեչենովյան հանճարեղ գաղափարները դեռևս շատ տարիներ առաջ ներթափանցել և ըստ արժանվույն բարձր են գնահատվել նաև հայ իրականության մեջ։

Ստացվել է 25 VIII 1955 թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Сеченов И. М.* Автобиографические записки, Москва, 1952 г., стр. 183.
2. «Հայկական Աշխարհ», 1869, № 3։
3. «Մշակ», 1889 թ. № 149։
4. *Истаманов С. С.* О влиянии раздражения чувствительных нервов на сосудистую систему у человека, СПБ, 1885 г., стр. 123–124.
5. *Вартанов В. С.* Гальванические явления в коже лягушки, СПБ, 1892 г., стр. 84.
6. *Коштоянц Х. С.* Очерки по истории физиологии в России, Изд. АН СССР, 1946 г. стр. 382.
7. *Орбели Л. Н.* Русск. физиологич. журнал, 1919 г., т. II.
8. Протокол Заседания Кавказск. Мед. общ. 3 февраля 1906 г., стр. 180—182.

К 50-ЛЕТИЮ СО ДНЯ СМЕРТИ И. М. СЕЧЕНОВА

А. А. Лалаян

Отклики идей И. М. Сеченова в досоветской армянской печати

Резюме

Первые отклики на взгляды великого русского ученого И. М Сеченова в досоветской армянской периодической печати, по материалам, имеющимся в нашем распоряжении, относятся в 1869 г., и связаны с вопросами высшего женского образования. Общеизвестно, что И. М. Сеченов являлся воинствующим борцом за права женщин.

Ученица И. М. Сеченова — Н. П. Суслова в 1864 г. поступила на медицинский факультет Цюрихского университета. С ней вместе училась и другая русская девушка. Этот факт получил свои отклики и в армянской действительности.

В связи с этим в 1868г. Г. Арцруни написал статью из Гейдельберга под заглавием „Цюрихский университет“, которая была напечатана в журнале „Айкакан ашхар“ (Армянский мир“) в 1869г. В этой статье Г. Арцруни описывает, как представители западноевропейской

интеллигенции оценивала этот факт как „удивительное и чудесное явление“, „явление, кажущееся совершенно чуждым“, которое совершенно не подобает характеру и морали женщины“.

Г. Арцруни отмечает также те трудности, которые они преодалевали.

Так, он пишет, что „первое время, когда девушки шли по коридору на лекцию, в группах студентов слышался смех и разные язвительные слова по их адресу. Несмотря на все это, девушки работали более усердно, чем многие из студентов, были более развитыми, чем любой из студентов“.

Это статья Г. Арцруни написана с чувством большой симпатии к русским женщинам, которые осмелились вступить в храм науки.

Как выясняется из других статей Г. Арцруни, написанных уже в более позднее время, он лично знал первых русских студенток Цюрихского университета.

В вышеупомянутой статье Г. Арцруни цитирует слова И. М. Сеченова о Н. П. Сусловой.

В нашей работе приведены и другие материалы, показывающие, что учение И. М. Сеченова имело своих последователей и в среде армянской интеллигенции. Если психолог А. Б. Багатрян находился под влиянием психологических взглядов И. М. Сеченова, то С. С. Истаманов и В. М. Вартанов шли по пути физиологического учения И. Н. Сеченова.

В статье приводятся и другие факты (из досоветской армянской периодической прессы и из протоколов Кавказского медицинского общества), свидетельствующие о том, что деятельность И. М. Сеченова еще много лет назад весьма высоко ценилась и в армянской действительности.